ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ս. ՊԱՆԴԱԼԵՈՆԻ (ՊԱՆՏԱՂԻՈՆ) ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿՄԱՄԲ ՆՈՐԱՅԱՅՏ ՎԻՄԱԳԻՐ ՏԱԹԵԻԻ ՎԱՆՔԻՑ (895Թ.)

ԱՐՍԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ars.vimagraget@gmail.com

Միջնադարեան Հայաստանի հոգեւոր ու կրթամշակութային նշանաւոր կենտրոններից է Տաթեւի վանական համալիրը (Ս. Եւստաթէի ուխտ), որը գտնւում է համանուն գիւղի հարաւարեւելեան կողմում՝ անդնդախոր ձորի պռնկին: Դեռեւս վաղ միջնադարում հիմնադրուած վանքը ծաղկում է ապրել Թ. դարավերջից. 895ին սկսուել է գլխաւոր Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցու կառուցումը: Այդ մասին է վկայում տաճարի արեւմտեան որմի հարաւային կողմում՝ արտաքուստ պահպանուած շինարարական կիսաեղծ արձանագրութիւնը՝ 6 տողից[1]՝

...[ՅԽ]Դ. (895) [ՀԱՅ]ՈՑ ԹՈՒԱԿԱՆՍ
...ՐԻՍ ՆԱՒԱՍԱՐԴԻ :Դ: [4]
... ՅՈՎԱՆԷՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍ
[ԿՈՊՈՍԻ], ՈՐ ՅԵՏ ՏՆ ՍՈՂՈՄՈՆԻԿ
[ԱՐԳԵՑԱՅ], ՍԿԻԶԲՆԱՐԱՐԱՔ ՇԻՆԱԾ
ՈՅՍ[2]

Արձանագրութիւնն առաջինը վկայակոչել է Սիւնեաց մետրոպոլիտ, պատմագիր Ստեփանոս Արք. Օրբէլեանը, ով թէպէտ պահպանել է վիմագրի բովանդակութիւնը, սակայն շարադրել է իւրովի[3]: *Դիւան Հայ Վիմագրութեան* Սիւնիքի համապատասխան պրակը կազմելիս՝ յիշեալ իրողութիւնը նկատել է նաեւ Սեդրակ Բարխուդարեանը, սակայն վիմագրի մասնակի եղծուած լինելը հաշուի առնելով՝ նա հաւատարիմ է մնացել Օրբէլեանի վերծանութեանը: Արժեւորելով արձանագրութեան կարեւորութիւնն իբրեւ Տաթեւի Վանքի պատմութեան վաղագոյն ու հաւաստի սկզբնաղբիւր՝ մենք փորձել ենք վերջերս արուած լուսանկարի հիմամբ նորովի ստանալ վիմագրի գրչանկարը[4]՝ դրանով իսկ առաւել ճշգրիտ վերծանութիւն դնելով գիտական շրջանառութեան մէջ:

Վերոյիշեալ վիմագրին աջից կից է միաժամանակ գրուած մէկ ուրիշը, որը, բարեբախտաբար, լաւ է պահպանուել: Բարխուդարեանն այն վերագրում է գաւազանի կամ «ճոճուող» սեան կառուցմանը: Վիմագիրը զետեղուած է առանձին քարին. 7 տող (նկ. 1բ):

Անվիճելի է, որ խօսքը վերաբերում է ինչ-որ կոթողի, սեան, արձանի կանգնեցմանը, որը տեղի է ունեցել «Ի ՆՈՅՆ ՏԱՐԻՈՋ», այսինքն՝ նախորդ արձանագրութեան մեջ վկայուած ՅԽԴ (895) թուականին: Հետեւելով Բարխուդարեանին՝ պէտք է հաստատենք, որ վիմագիրն, ըստ ամենայնի, Տաթեւի գաւազան-սեան շինարարական վկայագիրն է, որը տառաձեւերի հնագրական առանձնայատկութիւններով Թ. դարի վիմագրութեան դասական օրինակներից է: Գաւազան-սեան կառուցումը յիշատակում է դեռեւս Օրբէլեանը, որն ի մասնաւորի նշում է, թէ եկեղեցու աւարտից յետոյ «*...զամս մեկասան՝ կանգնէ եւ մերձ եկեղեցոյն հանդէպ դրանն հարաւոյ սիւն մի զարմանալի յանուն սրբոյ Երրորդութեանն ի մանր քարանց պատրաստեալ ի չափ 30 կանգնոյ*»[5]: Այսու, համաձայն Օրբէլեանի՝ սիւնը կանգնեցուել է 906ին եւ կոչուել Ս. Երրորդութիւն:

ՀՐԱՄԱՆԱՒ ԱԾԱՊԱՀ
ՏԵՐԱՆՑ ԵՒ ՅԱՒԺԱՐՈՒ
ԹԵԱՆԲ ԻՄՈՑ ԿՐԱՒՆ
ԱՒՈՐԱՑ ԵՒ Ի ՆՈՅՆ ՏԱ
ՐԻՈՋ Ի ՅԵՒԹՆԵՐՈՐԴ
ԱՄՍՈՅՍ ՅԱՐԱՑ ԿԱ
ՆԿՆԵՑԱՒ ԱՐՁԱՆՍ[6]



Նկ. 1 ա, բ Տաթեւի վաղագոյն արձանագրութիւնները, Թ.-Ժ. դդ.

Դառնալով սոյն յօդուածի խնդրոյ առարկայ նորայայտ արձանագրութեանը՝ նշենք, որ այն որմնասեան պատուանդան յիշեցնող մի քառանիստ բեկորի երկու նիստերին է (նկ. 2 ա, բ): Առաջին հայեացքից այն ինչ-որ սեան, կոթողի մաս է, միգուցէ դրա վերին կամ ստորին հատուածը՝ բաղկացած քառանիստ սիւնից ու ոճաւորուած գնդից (բարձ.՝ 0,67 մ., լայն. ճակատային մասում՝ 0,38 մ., կողքից՝ 0,24 մ.): Դատելով քարի մշակումից՝ սեան լայն նիստերից մէկը կից է եղել պատին, իսկ միւս երեքը՝ բաց, որոնցից դիմային ու ձախակողմեան նիստերին փորագրուած է արձանագրութիւնը: Կոթողը նախապէս դրուած էր Ս. Պօղոս-Պետրոս

եկեղեցու արեւմտեան պատի հարաւային անկիւնում՝ անմիջապէս վերոնշեալ արձանագրութիւնների տակ: Քանի որ տուեալ տեղանքը 2015ի հնագիտական պեղումների ծրագրով նախատեսուած էր պեղել[7], նպատակայարմար գտանք քարը տեղափոխել ապահով վայր, որի ընթացքում էլ ընդօրինակեցինք ուշագրաւ արձանագրութիւնը՝ դիմային մասում՝ 4, իսկ ձախ կողմում՝ 5 տողից.

ԿԱՆ[ԳՆ] ԵՑԱՒ Ս[ՈՒ]
ՐԲ ՊԱՆՏԱՂԻՈ
Ն Ի ՁԵՌՆ ԳԻՈՐ
[Գ] ՀԱՋԱՐ
Ա[Ր]Պ[ԵՏԻՆ]

Նկ. 2ա

Վիմագիրն ըստ հնագրութեան՝ Տաթեւի վաղագոյն արձանագրութիւնների ժամանակակիցն է, այսինքն՝ աներկբայ կարող ենք թուագրել Թ.-Ժ. դդ.: Համաձայն վիմագրի՝ Գիորգը, որն իրեն «հազարապետ» ու «նուաստ կրաւնաւոր» է բնորոշում, Ս. Պանդալեոնի (վիմագրում՝ Պանտաղիոն) անունով կոթող է կանգնեցրել: Նկատենք, որ *Պանդալեոն-Պանտաղիոն* բառում մենք գործ ունենք գրաբարեան լ-ղ ձայնորդ հնչիւնների արտասանութեան ու գրութեան երկակիութեան հետ, ինչը պայմանաւորուած էր գրաբարի վաղագոյն փուլում՝ նշուած ձայնորդների գրեթէ նոյնական լինելով: Վիմագրագէտ Սուրէն Աւագեանը փաստում է, որ դրանց գործառութային երկակի վիճակը շարունակուել է մինչեւ Ը. դարը. «*... երբ պատմական հնչիւնափոխութեամբ այդ հնչիւնների որակական ընդհանրութիւնը նուազում է եւ նրանք զգալի չափով հեռանում են իրարից*»[8]: Նա յաւելում է, որ լ-ղ ձայնորդներն արտայայտող գրերի գրաբարեան կիրառութիւնները շարունակուել են նաեւ յետագայ դարերում, սակայն. «*... հետեւելով ոչ թէ կենդանի արտասանութեանը, այլ դասական գրաբարի ուղղագրութեանը, այսինքն՝ Թ. դարից յետոյ ղ հնչիւնը այլեւս լ-ի նման առաջնալեզուային ձայնորդ չէր, այլ ետնալեզուային ձայնեղ բաղաձայն, սակայն գրութեան մէջ դեռ աւանդոյթի ուժով շարունակում էին այդ հնչիւնների նոյնացման կամ իրար փոխարէն գրելու դէպքերը*»[9]:

ՅԻՇ[Ե]Ա ՔՍ
ԱԾ ԶԳԻ
ՈՐԳՆ ՈՒ
ԱՍՏ ԿՐԱ
[ԻՆԱ]ԻՈՐ:

Նկ. 2բ Ս. Պանդալեոնի անուանակիր կոթողը կամ որմնասեան պատուանդանը

Դառնալով վիմագրում յիշատակուած Գիորգի «հազարապետ» պաշտօնին՝ նշենք, որ բառարաններում այն ստուգաբանւում է իբրեւ զինուորական պաշտօնեայ՝ հազարի պետ, արքունի գործակալ, վերահսկիչ, տնտես իմաստներով[10]: Նշուած վերջին պաշտօնները կարող էին գործածուել նաեւ հոգեւոր ոլորտում՝ նոյնանալով վանքի տնտեսութեան սպասաւորների զբաղեցրած տարաբնոյթ պաշտօնների հետ. կարծում ենք՝ վիմագիրն ասուածի վառ օրինակն է: Տաթեւի գաւիթ-սրահի վիմագրերից մէկում յիշատակուած է ոմն Գէորգ աշխատաւոր. ԶՀԱՅՐ ԳԷՈ/ՐԳ ԱՇԽԱՏԱԽ/ՈՐ ՏԱՆՍ ՅԻՇ/ԵՑԷՔ Ի ՔՍ[11]: Դատելով արձանագրութեան բովանդակութիւնից՝ Հայր Գէորգը վանքի սպասաւորներից է (աշխատաւոր) կամ մասնակցել է 1043ին կառուցուող սրահի աշխատանքներին:

Յայտնի փաստ է, որ առանձին կոթողներ անուանակոչուել են տարբեր սրբերի անուններով: Այս երեւոյթն առաւել ցայտուն է խաչքարերի օրինակով, երբ ըստ վիմագրերի՝ դրանք կերտուել ու կանգնեցուել են այս կամ այն սրբի անունով՝ երբեմն կրելով նաեւ սրբի պատկերագրութեանը համապատասխան յօրինուածք (ներկայումս Էջմիածնում ծագումով Յովհաննավանքից 1171ի թեւաւոր խաչքարը՝ Ս. Պօղոս-Պետրոս առաքեալների, Հաւուց Թառի ԺԳ. դարի խաչքարը՝ Ս. Սարգսի, Հաղբատ Գիւղի 1273ի խաչքարը՝ Յովհաննէս Աւետարանչի անուններով եւն.)[12]: Համլէտ Պետրոսեանն առանձնացնում է անուանակոչութեան դէպքեր, երբ խաչքար կանգնեցնողը նրան տալիս էր իր անուանակից սրբի անունը. օրինակ՝ Հերհերի 1383ի Ս. Ստեփանոս խաչքարի կանգնեցնողն ըստ վիմագրի՝ Ստեփանոս աբեղան է[13]: Համանման է նաեւ պատարագների յատկացման երեւոյթը, երբ նուիրատուն ակնկալել է պատարագներ ստանալ իր անուանակից սրբի յիշատակութեան օրը: Ինչ վերաբերում է մեր կողմից քննուող կոթողպատուանդանին, ապա չնայած նրան, որ Հրաչեայ Աճառեանը քանիցս

«Պանտալէոն» անձնանունը ստուգաբանում է[14], այդուհանդերձ վիմագրում երկիցս վկայուած է Գիորգի անունը, հետեւաբար, կոթողը կանգնեցուել է սրբի ոչ անուանակից անձի կողմից, բայց եւ՝ տուեալ սրբի անունով:

«*Սուրբ Պանտաղիոն*» անունով յայտնի է համաքրիստոնէական սուրբ Նիկոմիդացի բժիշկ Պանդալեոնը[15], յայտնի նաեւ՝ Պանդալեւոն, Պանտալեոն անուանաձեւերով (մօտ 275-305 թթ.): Նրա վարքն իր «*ուսուցչապետ*» Երմողայոս քահանայի հետ մտել է Յայսմաւուրքի մէջ՝ «*Վկայաբանութիւն Սրբոյն Երմողեայ քահանային եւ Պանտալեւոնի Բժշկին. Հրոտից Ի. եւ Յուլիսի ԻՁ.*» խորագրով[16]: Պանդալեոնը Նիկոմեդիա (այժմ՝ Իզմիթ, Թուրքիայի կազմում) քաղաքից էր, որի հայր Ստորոդիոսը դեռեւս պատանի Պանդալեոնին ուղարկել էր Եփրոսինոս ճարտար բժշկապետի մօտ՝ բժշկութեան արուեստը սովորելու: Պանդալեոնին վիճակուած էր ոչ միայն հմուտ բժիշկ դառնալ, այլեւ Ս. Երմողայոս քահանայի միջոցով քրիստոնէութեան վարդապետութիւնը սերտել: *Յայսմաւուրք*ում նշւում է, թէ ինչպէս է Պանդալեոնը Երմողայոսին ունկնդրելուց յետոյ կենդանացրել օձի խայթոցից մահացած պատանուն. «*Եւ ի ճանապարհին եւրեալ պատանի մի մեռեալ ի հարուածոյ օձի եւ դեռեւս անդ էր օձն մերձ տղային: Յիշեաց զբան Սուրբ ծերունոյն Երմողայոսի եւ անուանեաց զՅիսուս Քրիստոս ի վերայ մեռելոյն եւ առ ժամայն յարեաւ մեռեալն եւ օձն հերձեալ սատակեցաւ*»[17]: Յիշեալ դէպքից յետոյ Երմողայոսը Պանդալեոնին մկրտում է «*ի Քրիստոս հաւատացեալ*»: Սուրբ նշանի կամ խաչի զօրութեամբ նա բժշկում է «... *ի կաղս եւ ի կոյրս եւ յամենայն ցաւագարս եւ ի դիւահարս եւ զամենայն ցաւս ի մարդկանէ փարատէր*»[18]: Երմողայոսի եւ Պանդալեոնի դաւանած քրիստոնէութեան ուսմունքը տարածւում է ողջ երկրում, ինչը յարուցում է հեթանոս Մաքսիմիանոս կայսեր զայրոյթը: Վերջինս գլխատել է տալիս նախ Երմողայոսին ու նրա երկու ընկերներին, ապա՝ Պանդալեոնին, որի պարանոցից. «... *փոխանակ արեանն կաթն բխեաց եւ ջուր: Եւ սուրն ծալեցաւ որպէս մոմ եւ փայտ անւոյն արմատացաւ եւ եղեւ ծիթենի պտղալից*»[19]: Բարձրեալը նրան օժտում է որպէս փարատիչ ամենայն ցաւի եւ անուանակոչում ոչ թէ *Պանտալեւոն,* որ նշանակում է *ամենառիւծ,* այլ *Պանտաէլիմոն,* որ է՝ *ամենողորմ.* «... *զի բազումք յանուանէդ քումմէ՝ ողորմութիւն գտցեն եւ ցաւոց առողջութիւն*»[20]:

Մեզ յայտնի չէ այս սրբի անուանակիր կոթողներ հայ իրականութեան մէջ: Հարց է առաջանում. ի՞նչ կոթողի կամ սեան մասին է խօսքը, որը կանգնեցուել է վանքի գոյատեւման սկզբնական փուլում: Ինչպէս վերը նշեցինք, գլխաւոր եկեղեցու կառուցման աւարտին կանգնեցուել է գաւազան-սիւնը, այսինքն՝ վանքում կոթող կանգնեցուել է նշեալ դարաշրջանում: Չնայած նրան, որ Օրբէլեանն աւանդում է սեան անունը, որ է՝ Ս. Երրորդութիւն, այդուհանդերձ բացառուած չէ, որ քննուող վիմագիրը կարող է կապ ունենալ հենց յիշեալ կոթողի հետ կամ լինի նրա

բաղկացուցիչը, քանի որ գաւազան-սեան վերնամասը եւս յարդարուած է նմանատիպ ոճաւոր գնդով, որի վրայ ագուցուած է խաչը (նկ. 3 ա, բ): Հաւանական է նաեւ, որ վիմագիրը մէկ ուրիշ կոթողի է վերաբերում, որը կանգնեցուել է ի նշան յիշեալ սրբի պաշտամունքի:

Նկ. 3 ա, բ Գաւազան-սեան վերնամասը

Եթէ Ս. Պանդալեոնի անուանակիր կոթողներ այլուստ չեն արձանագրւում, ապա նրա անունով յայտնի են մի քանի սրբավայրեր. Հիւսիսային Արցախի Խանլարի շրջանում, Ազատ Գիւղից 5,5 կմ. հարաւ-արեւմուտք, Պանդ լեռան գագաթին է գտնւում Պանդալեոնի վանք-ուխտատեղին[21]: Ըստ Երուանդ Լալայեանի. «*Սա հիմնուած է համանուն սարի գագաթին, որ գտնւում է Հաճիքենդի մօտ: Լեռը միայնակ, բրգաձեւ բարձրանում է մինչեւ 5000 ոտնաչափ բարձրութեան եւ գագաթին ունի մի փոքրիկ հարթ տարածութիւն: Այնտեղ, ուր այժմ կանգնած է մի փոքրիկ, հասարակ քարից շինած գմբէթաւոր մատուռ, հնումը մի մեծ վանք է եղել, բաւականաչափ խցերով եւ ունեցել է միաբանութիւն: Այժմ միայն Ս. Աստուածածնի տօնին բաւական մեծ բազմութիւն ուխտ է գալիս այստեղ*»[22]: Մակար Եպս. Բարխուդարեանցը նկատում է, որ «*Վանքիս անուամբ ամբողջ սարս կոչւում է Պանդալիոնի սար, որը, կրճատելով ըստ տեղական սովորութեան, Պանդայ վանք, Պանդայ սար են անուանում*»[23]: Նա վկայակոչում է Ղալակա գիւղի Ս. Աստուածածին եկեղեցում պահուող ձեռագիր երկու աւետարանների յիշատակարանները, որոնցից մէկում վկայուած Անուզ-Հաւատուն-Հինգուզակ գիւղը ենթադրաբար նոյնացնում է Ս. Պանդալեոնի յարակից գիւղատեղի հետ. «*Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ փէծուն եւ բազմամեղ գրչի եւ սուտանուն վարդապետ Աբեթէի ի գեղս Անուզ Հաւայտուն Հենգուզակ, ի դուռն սուրբ եկեղեցուս մասն Պանդալիոն բժշկի եւ սրբոցն, որ աստ կան հաւաքեալ*»[24]:

Այն, որ Ս. Պանդալեոն եկեղեցում նաեւ ձեռագիր է գրուել, վկայում է Մաշտոցեան Մատենադարանի (ՄՄ) համար 3541՝ 1671 թուակիր «Աւետարան»ի գրչութեան յիշատակարանը. «... *Արդ, գրեցաւ սուրբ*

կենսաբեր Աւետարանս թուին Հայոց ՌՃԻ. (1671) ամին, ի թագաւորութեան պարսից Շահ Սուլըմանին նորընծայի եւ հայրապետութեան տանս Աղուանից տեառն Պետրոսի սրբազան կաթուղիկոսի, ի յերկիրս Գանջայ, ի գեօղս Համտիւնա ընդ հովանեաւ Սուրբ Պանտալիառն բժշկի եւ Սուրբ Աստուածածնի, ձեռամբ անարժան սուտանուն Ղազար անուամբ միայն քահանայի եւ գործովս ոչ. եւ Մաթէոս եւ Մարկոս գլուխն գրեցաւ վարպետին իմոյ Ազարիայ քահանայի՝ ի խնդրոյ բարեմիտ եւ աստուածասէր հեզահոգի»[25]: Յիշատակարանը պարզում է, որ գրիչները երկուսն են, մասնաւորապէս՝ Ազարիա քահանան Համտիւնա գիւղի (Ելիզաւետպոլի Նահանգում ու համանուն գաւառում[26]) Ս. Աստուածածին եկեղեցում գրել է Մատթէոսի ու Մարկոսի աւետարանները, իսկ Ղազարն այն շարունակել ու աւարտել է Ս. Պանդալեոնի վանքում: Այս իրողութիւնը մեծապէս կարեւորում է սրբավայրի նշանակութիւնը, որի հիմամբ այն եւս դասւում է Արցախի գրչութեան կենտրոնների շարքը[27]: Բացի այս, այն եղել է նաեւ նշանաւոր ուխտատեղի, ուր մանաւանդ Ս. Աստուածածնի Վերափոխման տօնին հաւատացեալներն ուխտի են եկել հիմնականում Գանձակ Քաղաքից ու նրա շրջակայքից[28]: Եկեղեցին միանաւ թաղածածկ յօրինուածքով նոր շինութիւն է (նկ. 4[29]), որն ըստ արեւմտեան մուտքի բարաւորից վեր փորագրուած ութտողանի արձանագրութեան՝ կառուցուել է 1856ին գանձակեցի Տ. Սարգիս Քհն. Տէր-Ազարեանցի միջոցներով եւ նորոգուել 1896ին՝ Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսի օրօք, Մամիկոն Յովհաննէսեան Տէր Սարգսեան Տէր Ազարեանցի հոգածութեամբ.

ՍԲ ՊԱՆՏԱԼԷՈՆԻ ՄԱՏՈՒՌՍ ՇԻՆՈՒԵՑԱՒ 1856 Թ. / ԳԱՆՁԱԿԵՑԻ
ՍԱՐԳԻՍ ՔԱ[ՀԱ]Ն[Ա]Յ ՏԷՐ-ԱԶԱՐԵԱՆԻ ԾԱԽ/ՔՈՎ, Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՒՐ
ՈՐԴԻ ՄԿՐՏՉԻ, / ՆՈՐՈԳԵՑԱՒ 1896 Թ. ՄԱՄԻԿՈՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ /
ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆ ՏԷՐ-ԱԶԱՐԵԱՆՑԻ ՀՈԳԱՑՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՒՐ
ԺՈՂՈՎՐԴԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ, / Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ.
ՄԿՐՏՉԻ Ա. «ՀԱՅՐԻԿ» ՍՐԲ/ԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ[30]

Վիմագիրը կարեւորւում է այս սրբի անուանակիր եւս մէկ յիշատակմամբ:

Նշելի է նաեւ այն, որ գիւղից 2 կմ. արեւմուտք՝ Սուլուկնաձորի ձախ հարաւահայեաց կողմում է գտնւում Պանդալեոնի մէջ քրիստոնէութիւնն արմատաւորած Երմողայոս քահանայի անուանակիր վանքը, յայտնի նաեւ՝ Սուլուկի անապատ անուամբ, որը 1987ին արդէն աւերակ էր[31]:

Լալայեանը Պանդալեոն բժշկի մատուռ է յիշատակում նաեւ ներկայիս ԼՂՀ Շուշիի շրջանի Կիրով Գիւղի[32] արեւելեան կողմում՝ բլրի վրայ: Այստեղ ամփոփուած են նաեւ սրբի մասունքներից: Լալայեանը գրում է, որ «*սա մի հասարակ, բաւական մեծ մատուռ է, որի մէջ գտնւում է Պանտալէօն բժշկի գերեզմանը: Սրա տապանաքարը սկզբում մի*

հասարակ կոճղ է եղել, բայց յետոյ շուշեցի Թ. Թամիրեանի ծախքով քար է ձգուած: Այս մատրան մօտ գտնւում է մի ուրիշ, շատ փոքրիկ մատուռ եւս, որի մէջ նոյնպէս մի գերեզման կայ: Ոչ մի արձանագրութիւն չկայ, միայն ժողովուրդն ասում է, թէ այդ գերեզմանը «Շահզադինն» է: Ժողովուրդը Պանտալէօն բժշկին պարոն Պիժ է կոչում եւ մեծ հաւատով վերաբերւում»[33]: Լալայեանի հաղորդած յիշեալ տեղեկութիւնը հիմնաւորում է մեր այն տեսակէտը, թէ Պանդալեոն սուրբը մեզանում (առաւելապէս՝ Արցախում) յատուկ պաշտամունք է ունեցել, ինչի առհաւատչեան նշեալ սրբավայրերի գոյութիւնն է:

Նկ. 4 Ս. Պանդալեոն վանք-ուխտատեղի, 1856

Այժմ փորձենք հասկանալ, թէ ինչով էր պայմանաւորուած Ս. Պանդալեոնի պաշտամունքի՝ Հայոց Արեւելից կողմում կենտրոնացուած լինելու հանգամանքը: Այս առումով ուշագրաւ վկայութիւններ են պահպանուել հայ մատենագրութեան մէջ. Մովսէս Կաղանկատուացին իր *Պատմութիւն*ի ԺԴ. գլխում տեղեկութիւններ է հաղորդում Ս. Գրիգոր Լուսաւորչի թոռ Գրիգորիսի՝ Աղուանից ու Վրաց կաթողիկոս ձեռնադրուելու, ապա նշուած վայրերում լուսաւորութիւն տարածելու մասին. «... *զինգեւրասան ամօք ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն մանուկն Գրիգորիս Վրաց եւ Աղուանից աշխարհին. եւ երթեալ լուսաւորէր զերկոսին զաշխարհսն եւ հաստատէր քրիստոսական հաւատովն գնալ*»[34]: Նա իր հետ է տարել. «... *զմեծ քահանայապետին եւ մարտիրոսին Զաքարիայ՝ զհօրն Յովհաննու ի պատուական արենէն նշխարս եւ սրբոյն Պանդալիոնի, որ դաւանեաց զբարիոք դաւանութիւնն Քրիստոսի եւ պսակեցաւ ի Նիկոմիդիա քաղաքի*»[35]: Սրբերի մասունքների մի մասը Գրիգորիսն ամփոփում է Ցրի քաղաքում (այժմ՝ ԼՂՀ Հադրութի շրջանի Ցոր Գիւղ[36]), իր կառուցած եկեղեցում. «...*շինէր փոքրիկ եկեղեցի եւ դնէր անդ մեծ զգուշութեամբ մասն ինչ յարենէն Զաքարիայ եւ ի նշխարաց սրբոյն Պանդալիոնի...*»[37]: Պատմագիրը հաղորդում է, որ յիշեալ սրբերի որոշ մասունքներ դեռ Գրիգորիսի մօտ էին, երբ քրիստոնէութեան ուսմունքը տարածելիս՝ վերջինիս յանդիմանում է մասքութների թագաւոր Սանեսանը: Ենթարկուելով թագաւորի դաժանութիւններին՝ Գրիգորիսը նահատակւում է Վատնեան կոչուող դաշտում (Մեծ Հայքի Փայտակարան

աշխարհի Վարդանակերտ քաղաքի մօտակայքում[38]), իսկ նրա մարմինն աշակերտները. «... *բերէին յԱմարաս գիւղաքաղաքն, որ էր ի գաւառին Հաբանդայ: Անդ եդեալ առ եկեղեցւոյն՝ հուպ ի բեմն ի հիւսիսոյ կողմանէ. եւ զսուրբ արիւնն Զաքարիայ ի միում ապակեղէն շշի եդեալ եւ ի միւսում շշի զերանելւոյն Պանդալիոնի զնշխարիս. եւ եդեալ զերկոսեան շիշսն ընդ ամենասուրբ նշխարսն մանկանն Գրիգորիսի...*»[39]: Կաղանկատուացին յիշատակում է նաեւ Աղուանից Վաչագան Բարեպաշտ թագաւորի օրօք՝ Յակոբ քահանային եւ Ցրի քաղաքի կառավարիչ Խոճկորիկին յայտնուած աստուածային տեսիլքի միջոցով սրբերի մասունքների գիւտը. «... *գտին զնշխարս երանելեացն. եւ գիր ի վերայ տարմալոյն, յորում սուրբքն կային զայս օրինակ. «Ես Գրիգորիս բերի զայս սուրբս՝ զերջանիկն Զաքարիա՝ զհայր Յովհաննու եւ զմեծ վկայն Քրիստոսի՝ զՊանդալիոն երանելի, որ վկայեաց ի Նիկոմիդիա քաղաքի. եւ աստեն վախճանեցայ»*»[40]:

Ս. Պանդալեոնի պաշտամունքը մեծապէս կապուած էր հիւանդների բժշկութեան հետ. նրա նշխարները երկրպագելու էին գալիս ջերմողներ, բորոտներ, ովքեր բժշկութիւն ստանալուց յետոյ հեռանում էին[41]: Ս. Պանդալեոնի պաշտամունքը կապուած էր նաեւ անզաւակներին զաւակ պարգեւելու, հետեւապէս՝ չբերութիւնը կանխելու հետ: Սրա վառ օրինակը Աղուանից Վաչագան թագաւորի՝ սրբերի միջնորդութեամբ Աստծուց զաւակ պարգեւելու աղերսն էր: Կաղանկատուացին վկայում է, որ Վաչագանը. «... *խնդութեամբ ընկալաւ զպարգեւսն ի յԱստուծոյ՝ ի ձեռն սրբոց վկայիցն: Եւ դնէր անուն մանկանն Պանդալիոն յանուն պատերազմող նահատակին Քրիստոսի Պանդալիոնի...*»[42]: Վաչագան թագաւորը սրբի անունով նաեւ մատուռ է կառուցում Դիւթական Գիւղում (Մեծ Հայքի Արցախ աշխարհի Ջրաբերդ Գաւառում, այժմ՝ աւերակ ու ամայի[43]), ուր ամփոփում է նաեւ նրա մասունքներից. «... *կատարեսցի հիմնարկութիւն մատրանն, որ ի Դիւրական գեղջն՝ յանուն Պանդալիոնի. զի անդ փոխեալ զերանելին մեծարեսցէ յոյժ*»[44]:

Ս. Գրիգորիսի նահատակութիւնը, նրա մասունքներն Ամարասում ամփոփելն ու Աղուանից Վաչագան թագաւորի օրօք սրբոց նշխարների գիւտը յիշատակում է նաեւ Կիրակոս Գանձակեցին. «*Յետոյ նշխարքն գտեալ եղեւ յաւուրս Վաչագանայ, ընդ որս եւ նշխարք սրբոցն՝ գտեալ եղեն՝ Զաքարիայի, հօրն Յովհաննու Մկրտչի, եւ Պանտալէիմոնի մեծ վկային Քրիստոսի, որ վկայեաց ի Նիկոմիդիայ քաղաքի յաւուրս Մաքսիմիանոսի, զոր տարեալ էր սուրբն Գրիգորիս ընդ իւր*»[45]:

Յատկանշելի են նաեւ Ս. Պանդալեոնի մասունքներն ամփոփող առարկաների վերաբերեալ մեզ յայտնի միքանի տեղեկութիւնները. Բարխուդարեանցի հաղորդմամբ՝ Գանձակի Ս. Յովհաննէս եկեղեցում էր պահւում նաեւ. «*Մասն Պանդալիոն բժշկի մի արծաթեայ, ոսկեզօծ եւ փոքր խաչի մէջ*»[46], որի վրայ մակագրուած է. «*Յիշատակ է Սուրբ Պանդալիոնայ եկեղեցւոյն մասունքս պահպանութիւն հասարակ*

ուխտաւորաց եւ Տէր Սարգիս Տէր-Ազարեանցին ծախիւքն 1859 ամի»[47]: Պարզւում է, որ մասունքարանը եւս պատրաստուել է վերոյիշեալ Ս. Պանդալեոն եկեղեցին կառուցող Տ. Սարգիս Քհն. Տէր-Ազարեանցի միջոցներով: Ս. Պանդալեոնի մասունքներից պահւում են նաեւ Վարանդա Գաւառի Աւետարանոց Գիւղի Ս. Աստուածածին[48], Շուշիի Ագուլեցոց Ս. Աստուածածին[49] եկեղեցիներում, Գանձասարի Վանքում, որտեղ սրբի մասունքն անթեղուած է արծաթեայ խաչի մէջ, իսկ մի տափակ ու տապանաձեւ արծաթեայ զարդի վրայ մակագրուած է. «*Շնորհիւ ամենազօրին կամեցաւ* (հաւանաբար՝ կազմեցաւ - Ա.Հ.) *մասնատուփս նշխարաց սրբոց Բանդալիոնի եւ Ուհանու Գբնեցոյն ձեռամբ Առաքել վարդապետի, թվ. ՌՃԾԵ. (1706)*»[50]: Սրբի մասունքի առկայութիւնը Գանձասարի Ս. Յովհաննէս եկեղեցում նշում է դեռեւս Կաղանկատուացին. «*Այլեւ անտ է օրէնսուսոյց սուրբ ծնօղն Լուսաւորչին եւ քաջ սրբոյն Գրիգորիսի՝ զթոռոյն նորին եւ զարիւն սրբոյն Զաքարիայի՝ հօրն Յովհաննու զնշխար սրբոյն Պանդալեոնի՝ մեծ վկային եւ այլ բազում սրբոց, յորոց բազում բժշկութիւնք լինին ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեան*»[51]: Յիշեալ վկայութիւնը եւս հաւաստում է Պանդալեոն սրբի պաշտամունքը բժշկութեան հետ առնչելու իրողութիւնը:

ԺԷ. դարի ձեռագրերի յիշատակարանները վկայում են, որ Ս. Պանդալեոնի մասունքներից ամփոփուած են նաեւ Յովհաննավանքում. ՄՄ համար 507 «Ժամագիրք ատենի» ձեռագրի նորոգման 1680 թուակիր երկարաշունչ յիշատակարանում, որի հեղինակը Զաքարիա Քանաքեռցին է, թուարկուած են վանքում ամփոփուած սրբերի անունները. «... *եղեւ նորոգումն այսմ Ժամագրքի երկիրս Արարատու, ի գաւառս Անբերդու, ի հրաշափառ եւ գերահռչակ սուրբ մենաստանս ի Սիւղիվանաց, որ ստուգաբանի Յոհաննուվանք... ի դրունս մեծի Ամլորդւոյն եւ երանեալ ամէնօրհնեալ բերանոյն Քրիստոսի՝ Սրբոյն Յովհաննու Կարապետին եւ սուրբ աջոյն Մատթէոսի աւետարանչի եւ սուրբ Լուսաւորչին եւ Պարսամայ ճգնաւորի եւ Պանդալէոնի բժշկի եւ այլ միաեղէն սրբոցս, որք կան աստ հաւաքեալ...*»[52]: 1687ի ձեռագրի նորոգման գրեթէ նոյնաբովանդակ մէկ այլ յիշատակարան էլ պահպանուել է ՄՄ համար 1522 «Ճառընտիր» ձեռագրում՝ դարձեալ Զաքարիա Քանաքեռցու անուան յիշատակմամբ[53]:

Յովհաննէս Եպս. Շահխաթունեանցի հաղորդմամբ՝ Ս. Պանդալեոնի մասունքներից պահւում է նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում. «*Խաչ փոքրիկ քառաթեւ. ի թեւսն խաչին՝ երկոքին երեսքն եւս վարդաձեւ խաս ակամբք զարդարեալ. ի միջակիտին ի ներքոյ ապակւոյն տեսանի մասն ոսկեր եւ թուղթ ի վերայ, յոր գրի. «Մասն սուրբ Պանդալեւոնի»: Իսկ ի միւս երեսի՝ եղեալ է յիշատակագրութիւն, բայց եղծեալ է երկաթի գրչաւ եւ գրեալ փոխանակ «Պետրոս վարդապետ Աստապատցի*»»[54]: Վերջինս, ամենայն հաւանականութեամբ, Ս. Էջմիածնի աթոռակալ Պետրոս վարդապետ

Աստապատցին է, որը վախճանուել է 1729ին ու թաղուել Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում[55]:

Նկ. 5, 6 Ս. Պանդալեոնը հայ մանրանկարչութեան մէջ (ՄՄ ձեռ. համար *4519, 265բ, ՄՄ ձեռ.* համար *1533, 480բ)*

Հայաստանի Պատմութեան Թանգարանի եկեղեցական առարկաների հաւաքածուում պահւում է ծագումով Տաթեւի Վանքից 1762ի արծաթեայ խաչ՝ ընդելուզուած գունաւոր քարերով: Համաձայն մակագրութեան՝ խաչը յիշատակ է Խունդիկին, ինչպես նաեւ ղափանցի Գասպարին եւ իւր որդիներ մահտեսի Պալասանին ու Մարտիրոսին[56]: Ուշագրաւն այն է, որ մակագրուած են նաեւ չորս սրբերի անուններ. «Ս(ուր)բն Հռ(ի)փս(ի)մէ, Ս(ուր)բ(ն) Ըմստին(ո)ս, Ս(ուր)բն Պ(ա)նդ(ա)լիոն, Ս(ուր)բ(ն) Յ(ո)վհ(ան)ն(է)ս Մկրտ(ի)չ»[57]. խաչաթեւերը, որոնցում, ըստ ամենայնի, ամփոփուած են եղել սրբերի մասունքներից, կրել են նրանց անունները: Այս վկայութիւնն ինքնին հիմնաւորում է մեր ենթադրութիւնը, թէ Տաթեւում յատուկ նշանակութիւն է տրուել Պանդալեոն բժշկի պաշտամունքին, այստեղ ամփոփուած են եղել նրա մասունքներից՝ ի նշան որոնց առանձին կոթող կամ նոյնիսկ սիւն է կանգնեցուել:

Մեզ յաջողուեց Ս. Պանդալեոնին գտնել նաեւ հայ մանրանկարչութեան մէջ (ՄՄ ձեռ. համար 1533, 4519)[58]: Ժամանակագրօրէն վաղագոյնը ՄՄ համար 4519 ձեռագիրն է՝ գրուած 1362ին Երզնկայում, Սարգիս գրչի կողմից: Ձեռագրի մանրանկարչութիւնը հիմնականում գծանկարային է՝ արտայայտուած մանուշակագոյնի տարբեր երանգներով: Պանդալեոնը պատկերուած է թերթի ձախ լուսանցում՝ ողջ հասակով, գլխին ունի լուսապսակ, իսկ ձեռքերով պահել է բացուած գլանակը (նկ. 5), որի գրութիւնները ցուցում են նրա անցած ուղին ու բժշկութեան հրաշագործութիւնները[59]: Ինչ վերաբերում է ՄՄ համար 1533, Էջմիածնում՝ 1725-1730ին գրուած «Յայսմաւուրք» ձեռագրին, ապա այն ունի ճոխ նկարազարդում: Ծաղկողները Յակոբ եւ Յարութիւն Յովնաթանեան եղբայրներն են, պատուիրատուները՝ Ամենայն Հայոց

կաթողիկոսներ Աստուածատուր Համադանցին ու Կարապետ Ուլնեցին կամ Զէյթունցին[60]: Այս ձեռագրում Պանդալեոնը դարձեալ պատկերուած է թերթի ձախ լուսանցում՝ հասակով մէկ, պատանու տեսքով ու ոսկեգոյն լուսապսակով (նկ. 6): Հագին ունի կարմիր պարեգօտ, շագանակագոյն թիկնոց, կանաչ գօտի եւ կապոյտ ոտնամաններ: Ձախ ձեռքին դեղատուփն է, իսկ աջին՝ գդալ, որը խորհրդանշում է նրան տրուած շնորհը, ինչպէս նաեւ բոլորին օգնելու ու բժշկելու պատրաստակամութիւնը[61]:

Նկ. 7 Տաթեւի Վանքը հարաւ-արեւելքից

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ամփոփելով ՝ պէտք է արձանագրենք, որ Ս. Պանդալեոն բժշկի անուանակիր վիմագիրն առաջնահերթ կարեւորւում է իր բովանդակային, իսկ կոթողը՝ գործառութային նշանակութեամբ: Քննութիւնը պարզում է, որ սրբի պաշտամունքը տարածուել է յատկապէս Արցախ աշխարհում՝ պայմանաւորուած Ս. Գրիգորիսի կողմից նրա մասունքներից այստեղ տեղափոխելու ու ամփոփելու իրողութեամբ: Այստեղից շատ հեռու չէր նաեւ Սիւնեաց գեղատեսիլ Տաթեւի Վանքը, որտեղ եւս, ըստ ամենայնի, ամփոփուել են սրբի մասունքներից, որի առթիւ արձանագիր կոթող կամ սիւն է կանգնեցուել: Սրա օգտին է նաեւ Տաթեւից՝ Հայաստանի Պատմութեան Թանգարան տեղափոխուած արծաթեայ խաչի սրբի անունով մակագրութիւնը:

Ս. Պանդալեոնի պաշտամունքը հիմնականում կապուած է բժշկութեան հետ, սակայն նկատեցինք, որ նա նաեւ բարեխօսում է անզաւակութեան ու չբերութեան կանխման համար: Ենթադրում ենք, որ այսօրինակ նպատակների «պաշտպանն է» կոթողը, որն ըստ վիմագրի հնագրութեան՝ կանգնեցուած պէտք է լինի Ժ.-ԺԱ. դարերում: Համաքրիստոնէական սրբի անուանակիր վիմագրի գիւտը, այն էլ հարազատ յիշեալ դարաշրջաններին, ինքնին բացառիկ է: Այն քրիստոնեայ աշխարհի ու հայ

եկեղեցու պատմութեան ուսումնասիրման համար նորանոր նախադրեալներ է ստեղծում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Տաթեւի վանքի վիմագրերը հրատարակուած են *Դիւան Հայ Վիմագրութեան* մատենաշարի երկրորդ պրակում (93 միաւոր): Վիմագրագէտ Սեդրակ Բարխուդարեանը նախորդ հրատարակիչներից (Ստեփանոս Օրբէլեան, Յովհաննէս Շահխաթունեանց, Սարգիս Ջալալեանց, Ղեւոնդ Ալիշան, Երուանդ Լալայեան, Մատթէոս Փափազեանց, Կարապետ Կոստանեանց, Ալեքսանդր Երիցեան) վերցրել է նաեւ չպահպանուած արձանագրութիւնները (*Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ II, Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի Շրջաններ*, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1960, էջ 11-39): Պրակում օգտագործուած չէ Մեսրոպ Մագիստրոսի գիրքը, որտեղ Տաթեւից ներկայացուած է 144 վիմագիր (Մեսրոպ Մագիստրոս Արք. Տէր-Մովսիսեան, *Հայկական Երեք Մեծ Վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի Եկեղեցիները*, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1938, էջ 44-53): Վիմագրերից 45ը Մեսրոպ Մագիստրոսը հրատարակել է դեռեւս 1918ին (*Արարատ*, 1918, էջ 204-225). դրանք վերջերս վերահրատարակուել են առանձին ժողովածուում (Մեսրոպ Արք. Տէր-Մովսիսեան (Մեսրոպ Մագիստրոս), *Յօդուածների Ժողովածու*, հրատարակութեան պատրաստեցին՝ Գէորգ Տէր-Վարդանեան եւ Սուսաննա Նահապետեան, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատ., 2010, էջ 279-297): Յետագայում Սիւնիքի Մարզի անտիպ արձանագրութիւնների շարքում վիմագրագէտ Սուրէն Սաղումեանը Տաթեւի Վանքից եւս 23 վիմագիր է գիտական շրջանառութեան մեջ դրել՝ հաւաստելով, որ «*այսքանով չի վերջանում Տաթեւի վիմագրերի մասին ասելիքը. դեռեւս 3-4 տասնեակ անտիպ վաւերագրեր կան վանքի հողմահար ու գօսացած պատերին, որոնց հրապարակումը նպաստ կը բերի այս բեղմնաւոր կենտրոնի եւ համազգային պատմութեանը*» (Ս. Սաղումեան, «Նորայայտ Վիմագրեր», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 2001, համար 1, էջ 100):

[2] Ստեփաննոս Օրբէլեան Արքեպիսկոպոս Սիւնեաց, *Պատմութիւն Նահանգին Սիսական*, Թիֆլիս, Տպ. Աղանեանցի, 1910, էջ 224. նաեւ՝ Հայր Ղեւոնդ Ալիշան, *Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց Աշխարհի*, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 227. նաեւ՝ *Վիմական Տարեգիր. Յուցակ Ժողովածոյ Արձանագրութեանց Հայոց*, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, Տպ. Գիտութեանց Ճեմարանի Կայսերականի, 1913, էջ 4. նաեւ՝ Տէր-Մովսիսեան, *Հայկական Երեք Մեծ Վանքերի*..., էջ 44, արձ. 1. նաեւ՝ *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ II*, էջ 13, արձ. 1:

[3] Սիւնեաց պատմութիւնը շարադրելիս՝ Օրբէլեանն առանձին գլխով անդրադարձել է Տաթեւի արդիւնաշատ եպիսկոպոս Տէր Յովհաննէսի գործունէութեանն ու կաթողիկէ եկեղեցու կառուցմանը՝ վկայակոչելով շինարարական արձանագրութիւնը. «*Յամին յորում թուականն Հայոց 344 էր, եւ զատիկն ի նաւասարդի ի 4, ես Տէր Յովհաննէս, որ երկրորդ կարգեցայ եպիսկոպոս Սիւնեաց զկնի Տեառն Սաղմօնի, արարի սկիզբն շինուածոյ եկեղեցւոյս*» (Օրբէլեան, *Պատմութիւն Նահանգին Սիսական*, էջ 224):

[4] Գրչանկարները մերն են:

[5] Օրբէլեան, *Պատմութիւն Նահանգին Սիսական*, էջ 225:

[6] Տէր-Մովսիսեան, *Հայկական Երեք Մեծ Վանքերի*..., էջ 45, արձ. 15. նաեւ՝ *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ II*, էջ 13, արձ. 2:

[7] Վերջին տարիներին «Տաթեւի Վերածնունդ» ծրագրի շրջանակներում պեղման ու բարեկարգման աշխատանքներ են տարւում վանքում: Պեղումներն իրականացնում է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի արշաւախումբը (ղեկավար՝ պ.գ.թ. Հ. Մելքոնեան, անդամներ՝ պ.գ.թ. Ա. Յարութիւնեան, Դ. Դաւթեան):

[8] Ս. Ա. Աւագեան, *Վիմական Արձանագրութիւնների Հնչիւնաբանութիւն (X-XIV դդ.)*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1973, էջ 301:

[9] Նոյն, էջ 302:

[10] Ստ. Մալխասեանց, *Հայերէն Բացատրական Բառարան, Հտր. Երրորդ*, Երեւան, ՀՍՍՌ Պետ. Հրատ., 1944, էջ 9. նաեւ՝ Հրաչեայ Աճառեան, *Հայերէն Արմատական Բառարան, Գ. Հատոր*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1977, էջ 6. նաեւ՝ Ռ. Ղազարեան, *Գրաբարի Բառարան, Հտր. 2*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2000, էջ 11-12:

[11] Տէր-Մովսիսեան, *Հայկական Երեք Մեծ Վանքերի*..., էջ 48, արձ. 46. նաեւ՝ *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ II*, էջ 21, արձ. 32:

[12] Համլէտ Պետրոսեան, *Խաչքար. Ծագումը, Գործառոյթը, Պատկերագրութիւնը, Իմաստաբանութիւնը*, Երեւան, Փրինթինֆօ, 2008, էջ 257-259:

[13] Նոյն, էջ 260:

[14] Հրաչեայ Աճառեան, *Հայոց Անձնանունների Բառարան, Հտր. Դ.*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1948, էջ 221:

[15] Շնորհք Արքեպիսկոպոս Գալուստեան, *Համաքրիստոնէական Սուրբեր*, Գ. տիպ, Երեւան, «Գանձասար», 1997, էջ 199-201:

[16] *Գիրք, Որ Կոչի Այսմաւուրք, Որ Պարունակէ Յինքեան Զճառս Վարուց Սրբոց*..., 1730, Տպ. Գրիգոր Դպիր Մարսլիանեցի, էջ ՁՃՀ-ՁՃՀԱ: Պանդալեոն բժշկի վարքն ու վկայաբանութիւնը մանրամասն տե՛ս նաեւ՝ Հ. Մկրտիչ վարդապետ Աւգերեան, *Լիակատար Վարք եւ Վկայաբանութիւն Սրբոց, Որք Կան Ի Հին Տօնացուցի Եկեղեցւոյ Հայաստանեայց, Հտր. Զ.*, Վենետիկ, Ս. Ղազար, 1813, էջ 488-524. նաեւ՝ *Վարք եւ Վկայաբանութիւնք Սրբոց. Հատընտիր Քաղեալք Ի Ճառընտրաց, Հտր. Բ.*, Վենետիկ, Ս. Ղազար, 1874, էջ 189-201:

[17] *Գիրք, Որ Կոչի Այսմաւուրք*, էջ ՁՃՀ:

[18] Նոյն:

[19] Նոյն, էջ ՁՃՀԱ:

[20] Նոյն:

[21] Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 4*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1998, էջ 301. նաեւ՝ Ստ. Մելիք-Բախշեան, *Հայոց Պաշտամունքային Վայրեր*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2009, էջ 334:

Ս. Պանդալեոնի պաշտամունքը լայն տարածում է ունեցել նաեւ Հայաստանի սահմաններից դուրս, ինչով էլ պայմանաւորուած այս սրբի անուանակիր եկեղեցիներ կան եւրոպական ու ասիական միքանի պետութիւններում.

դրանցից է Ուկրաինայի Տեռնոպոլի Մարզի Հին Գալիչի Ս. Պանտալէյմոն եկեղեցին, որն ունեցել է նաեւ հայերէն արձանագրութիւն (*Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ VII, Ուկրաինա, Մոլդովա*, կազմեց՝ Գ. Մ. Գրիգորեան, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1996, էջ 225): Եկեղեցիներ կան Գերմանիայի Քէօլն քաղաքում (Ժ. դար), Մակեդոնիայի Գորնօ Ներեզի գիւղում (1164 թ.), Ֆրանսիայի հարաւային շրջանների վեց համայնքներում եւ այլուր, իսկ իտալական արուեստում Պանդալեոնը հանդիպում է յատկապէս որմնանկարներում, պատկերագրութիւններում (Հռոմի Սանտա Մարիա, Սան Քրիսոգոնօ եւն.), ինչպէս նաեւ Թուրքիայում, մասնաւորապես՝ Ստամբուլում կան այս սրբի անուանակիր միքանի եկեղեցիներ (հմմտ.՝ https://en.wikipedia.org/wiki/Saint_Pantaleon):

[22] Երուանդ Լալայեան, «Գանձակի Գաւառ. Նշանաւոր Վանքեր», *Ազգագրական Հանդէս, Ե. Գիրք*, համար 1, Թիֆլիս, Տպ. Կ. Մարտիրոսեանցի, 1899, էջ 347. նաեւ՝ Հ. Համազասպ Ոսկեան, *Արցախի Վանքերը*, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1953, էջ 141-142:

[23] Մակար Եպս. Բարխուդարեանց, *Աղուանից Երկիր եւ Դրացիք: Արցախ*, Երեւան, «Գանձասար», 1999, էջ 299:

[24] Նոյն, էջ 110: Հեղինակը յաւելում է, որ յիշատակարանի վերջում գրիչը պարզում է, թէ գրել է Արցախի Խաչէն Գաւառի Մեծիրանից Ս. Յակոբայ վանքում:

[25] ՄՄ ձեռ. համար 3541, էջ 280բ-281ա:

[26] Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 3*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1991, էջ 328:

[27] Թ. Մինասեան, *Արցախի Գրչութեան Կենտրոնները, Ալբոմ-Ուսումնասիրութիւն*, Երեւան, «Նաիրի» Հրատ., 2015, էջ 100:

[28] Ս. Կարապետեան, *Հիւսիսային Արցախ*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2004, էջ 316:

[29] Լուսանկարը սիրայօժար մեզ տրամադրեց յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանը. յայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

[30] *Կարապետեան,* էջ 316: Հաւանաբար անտեղեակ լինելով վիմագրին՝ Բարխուդարեանցը գրում է, թէ մատուռը նորոգուել է գանձակեցի Սարգիս Քինյ. Ազարեանցի միջոցներով՝ ի յիշատակ իր վաղամեռիկ Յովհաննէս որդու, իսկ երկաթեայ դուռը յիշատակ է նոյնպէս գանձակեցի Պ. Մկրտիչ Յովհաննիսեանին (Բարխուդարեանց, էջ 299):

[31] Կարապետեան, էջ 315:

[32] Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից, Հտր. 3*, էջ 533-534:

[33] Երուանդ Լալայեան, «Զանգեզուր. Նշանաւոր Վանքեր», *Ազգագրական Հանդէս, Դ. Գիրք*, Հմր 2, Թիֆլիս, Տպ. Մ. Դ. Ռօտինեանցի եւ Կ. Մարտիրոսեանցի, 1898, էջ 49:

[34] Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից Աշխարհի*, քննական բնագիրը եւ ներածութիւնը՝ Վարագ Առաքելեանի, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1983, էջ 36-37:

[35] Նոյն, էջ 37:

[36] Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 5*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2001, էջ 163:

[37] Կաղանկատուացի, էջ 37:

[38] Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 4*, էջ 769:

[39] Կաղանկատուացի, էջ 39:

[40] Նոյն, էջ 59-60:

[41] Ս. Պանդալեոնի հրաշագործութիւնների մասին մանրամասն տե՛ս՝ *Սուրբ Նահատակ եւ Բժիշկ Պանտելեիմոնի Հարչարանքները եւ Հրաշքները*, թարգմ.՝ Արա Զոհրաբեան, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատ., 2009:

[42] Կաղանկատուացի, էջ 63:

[43] Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 2*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1988, էջ 128:

[44] Կաղանկատուացի, էջ 86:

[45] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, աշխ. Կ. Ա. Մելիք-Օհանջանեան, Երեւան, 1961, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., էջ 194-195:

[46] Բարխուտարեանց, էջ 182:

[47] Նոյն:

[48] Նոյն, էջ 209:

[49] Նոյն, էջ 234:

[50] Նոյն, էջ 251:

[51] Կաղանկատուացի, էջ 349-350:

[52] *Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր. Բ.*, կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Ա. Քէօշկերեան, Երեւան, «Նաիրի» Հրատ., 2004, էջ 1049:

[53] *Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր. Ե.*, կազմեց՝ Օննիկ Եգանեան, Երեւան, «Նաիրի» Հրատ., 2009, էջ 253:

[54] Յովհաննէս Եպս. Շահխաթունեանց, *Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ Հինգ Գաւառացն Արարատայ*, աշխ. Ա. Տէր-Ստեփանեան, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատ., 2014, էջ 57:

[55] Ա. Յարութիւնեան, *Վաղարշապատ. Վանքերը եւ Վիմական Արձանագրութիւնները*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատ., 2016, էջ 155-156, արձ. 237:

[56] *Յատկանշական Ցուցակ Թանգարանային Ժողովածուների, Պրակ 1, Հայերէն Արձանագրութեամբ Առարկաներ*, աշխ. Եւգինէ Մուշեղեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, էջ 85, արձ. 89ա (6849):

[57] Նոյն:

[58] Ա. Գէորգեան, *Հայ Մանրանկարիչներ. Մատենագիտութիւն (IX-XIX դդ.)*, Գահիրէ, Տպ. Նուպար 1998, էջ 482. նաեւ, նոյնի՝ *Անանուն Հայ Մանրանկարիչներ. Մատենագիտութիւն (IX-XVII դդ.)*, Գահիրէ, Տպ. Նուպար, 2005, էջ 131:

[59] А. В. Велько, *Святой Великомученик И Целитель Панталеимон,* (Ա. Վելկо, Սուրբ մեծ նահատակ եւ բժշկարար Պանտալեիմոն), Մինսկ, Բելառուսական Ուղղափառ Թեմի Հրատ., 2010, էջ 16.

[60] Ուշագրաւ է ձեռագրի գրչութեան յիշատակարաններից մէկը. «*Փառք... Արդ, այսմ աստուածունակ փառիս փափքելի տենչմամբ տէր Աստուածատուր կաթողիկոսն Ամենայն Հայոց, եւ եւ զսա գծագրել ի թուականիս մերոյ ՌՃՀԴ.-ին (1725), բայց ի սոյն ամի վախճանեցաւ Աստուածատուր կաթողիկոսն, եւ մնաց գիրս այս կիսակատար, որ եւ արդեամբք եւ գոյիւք տեառն Կարապետ կաթուղիկոսի Զէյթօնցւոյ, զկնի յաջորդի Աստուածատուր կաթուղիկոսին ի Սուրբ Աթոռն Էջմիածին, եւ վերակացութեամբ ումեմն Աղէքսանդր վարդապետի Մրգիւզի ի Կոստանդնուպօլսեցւոյ, գոյնաւորեալ զանազան որակօք եւ ոսկեզօծ ծաղկօք՝ աւարտ հասեալ ի թուականիս Հայոց ՌՃՀԹ.-ին (1730), մարտի Ժ. (10), ի դրան Սուրբ Էջմիածնի...*» (*Մայր Ցուցակ, Հտր. Ե.*, էջ 383):

[61] Велько, էջ 16:

NEWLY-FOUND EPIGRAPHIC INSCRIPTION FROM TATEV MONASTERY THAT MENTIONS THE NAME OF ST. PANDALEON (PANTAGHION)

(Summary)

ARSEN HARUTYUNYAN
ars.vimagraget@gmail.com

The Monastery of Tatev (province of Syunik, Republic of Armenia, Tatev village) is rich in epigraphic inscriptions, some of which are still unpublished. An inscription bearing the name of Saint Pandaleon, preserved on what may be a pilaster pedestal or two parts of an obelisk base, stands out among several others and is the focus of this paper.

In this study, the author argues that the cult worship of St. Pandaleon was widespread in Artsakh. This tradition seems to had started in this area by St. Grigoris, son of St. Gregory the Illuminator. As a further proof of this widespread tradition, the author notes that relics of St. Pandaleon are preserved in several sanctuaries of Armenia (St. Etchmiatsin, Gandzasar, Hovhannavank, St. Astvatsatsin of Shushi, St. Astvatsatsin of the village of Avetaranots, etc.) He points out that St. Pandaleon is also pictured in the Armenian miniatures (Manuscripts of Matenadaran after Mesrop Mashtots, N 1533, 4519).

As the monastery of Tatev is not far from Artsakh, the paper asserts that the discovery of this inscription in Tatev indicates that the relics of St. Pandaleon were also buried in Tatev and an obelisk or monument was erected on the occasion.